4848

891.85
U-40

2008

2011

ԱՆՈՐ ԵՐԹԱՆՔ

89|.85-3
Ս-40

ՍԻԷՆՔԻԷՎԻՉ

1913

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

391.85
U-40

ՀԵՆ· ՍԻԷՆՔԻԷՎԻՉ

ԱՆՈՐ ԵՐԹԱՆՔ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՆՐԱՎԷՊ
ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՄԱՆԱԿԻՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ· ԱԼԵՔՍԻՍ Ա· ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ
*C.C.P.A Публичная Библ
7/11 1922
ԱՄՐՈՒԱ, Мясницкая
Ա. ՅՅԱՍԻՆՅԱՆԻ Ս

ՎԵՆԵՏԻԿ· Ս· ՂԱԶԱՐ
1913

1486

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հանգստեան ժամերուս ախորժելի եւ օգտակար ժամանց մ'եղաւ գրքոյկիս ընթերցումը. նոյն հաճոյքն ուզեցի տալ նաեւ իմ ազգայիններէս անոնց՝ որ պայմաններու բերմամբ պիտի չկարենան գուցէ բնագրէն կամ օտար լեզուով մը կարդալ գրքոյկս *Անոր Երթալիք*։

Այս զգացումով եւս շարժած, իմ հոգեկից Հ. *Անանիա Վ. Գանուտաքեան* հայերէնով ի լոյս ընծայեց եւ կ'ընծայէ հեղինակիս ուրիշ բազմաթիւ գործերը, ինչպէս են *Սրով ու Հրով*, *Ջրհեղեղ*, *Փառ Մինքայհ Վոլտիովսքի* յաջորդական հատորներն, որոնք մեկ մեկէ աւելի ընտիր են եւ օգտակար՝ ոճով, իմաստով եւ հմտութեամբ։

Հեն. Սիենքիեվիչ վարձատրուած է արդէն՝ իւր համաշխարհիկ ընթերցողներով, նոյնը կ'ըղձան նաեւ իւր թարգմանիչները։

ԱՆՈՐ ԵՐԹԱՆՔ

Ա.

Կայիոս Սեպտիմոս Կիննա՝ հռովմայեցի պատրիկ մ՚էր, որ յետ պատանեկութիւնը Լեգէոններու մէջ անցընելու, նոր Հռովմ վերադարձեր էր, զեղխութեան և ամէն հաճոյքի անձնատուր ըլլալու համար, ինչպէս կրնար ընել այդ ժամանակին մէկը՝ որ ամենահարուստ էր՝ ինչպէս էր ինք, թէև ոչ այնչափ՝ որչափ էր ժամանակաւ։

Այսպէս, հանդէսներով ու կոչունքներով կը լուսցնէր գիշերները պատրիկական հըրաշագեղ ամարանոցներու մէջ, իսկ ցերեկը մարմնակրթական խաղերով կը զբաղէր և կամ ջերմուկներու քրտնարաններուն մէջ՝ հռետորներու հետ, ուր բաց ի փիլիսոփայութենէ՝ խօսակցութեան նիւթ կը կազմէին Հռովմի և աշխարհի առօրեայ դէպքերը։

Կրկէսը, թատրոնը, սուսերամարտներու կռիւներն իրեն համար հաճելի տեսարաններ էին, և յաժարակամ կ՚ունկնդրէր յու-

նական կիթառի ձայնին, և թրակացի վըհուկներէ գուշակութիւններ կ'առնուր ու ներկայ կ'ըլլար եգեան ծովու կղզեբնակաց պարերուն։

Մօր կողմանէ, որ մեծին Լուկուլլոսի ընտանիքէն էր, ընտիր ճաշակ մը ժառանգած ըլլալով, իր սեղաններն շռայլօրէն կը զարդարէին Յունաստանի ազնիւ գինիներ, Նաբոլիի ոստրէներ, Պոնտոսի գիրուկ մարախներ ու բուրումնաւէտ մեղրեր։ կարմիր ծովու հազուագիւտ ձկներ, վոսփորի անբնակ եզերքէն՝ սպիտակ կաքաւներ կը յորդէին իր սեղանը, ինչպէս և Հռովմի վաճառանոցին ամէն երախայրիք՝ իրեն համար էին միշտ։

Եւ ամէն բան կը ճաշակէր նա ազնուական նրբութեամբ, ոչ թէ որկրաժեռութեան համար, կամ ագնուականութիւն ցոյց տալու, կամ հարուստ և գեղեցկագէտ տեսնուելու մարմաջով։ Բաւական գեղարուեստէ կը հասկնար, և ինք ալ այդպէս համոզուած էր. ու հաւաքածոյներ կը կազմէր բազմաթիւ հնութիւններու, ինչպէս նաև կորնթական արձաններու, եարուրական անօթներու, միգամած Երիքովէ եկած սափորներու. և շատ կը սիրէր հռովմէական խճանկարներ, Պարսկաստանի գորգեր, Ալաբիոյ մեծագին անուշահոտ նիւթեր։

Ընդարձակ հմտութեամբ և գրական գեղեցիկ ճաշակով օժտուած, կիննա յաճախ հաճոյք կը զգար խօսակցիլ, սեղանի վրայ, փիլիսոփաներու և հռետորներու հետ՝ գլուխը պսակուած վարդերով և արեւաղէմ ծաղիկներով, որոնք սեղանէն վերջ՝ դէմքին ու շունչին բոյր ու թարմութիւն կու տային։

Որատեան երգերը կը հասկնար և անոնց գեղեցիկ իմաստները կը մեկնէր, յունարէնը մաքուր ու շնորհալի կը խօսէր, գոց գիտէր Իլիականի գեղեցիկ կտորները, և գինւոյ բաժակին քով՝ սիրով Անակրէոնի տաղերը կը գեղգեղէր մինչև որ բոլորովին հարբէր ու խոր քուն ըլլար։

Դպրոցի մէջ և իմաստուն ուսուցիչներէ խոր ծանօթութիւն ստացած էր զանազան փիլիսոփայական դրութեանց մասին, անյպէս որ ոչ միայն հմտութեամբ կը խօսէր անոնց վրայ՝ որ նոյն ժամանակ կը ծաղկէին Յունաստանի և արեւելքի մէջ, այլ նաև անոնց՝ որ ժամանակէ մ'ի վեր ինկած ու մոռցուած էին։

Սոֆիկեաննները, զորս սակայն չէր արհամարհեր, իրեն կը թուէին տխուր, ձանձրացուցիչ, կեանքի ամէն վայելքներու թշնամի, կեղծաւոր և կուսակցական

մարդիկ։ Ասոնք յաճախ կը մասնակցէին իւր Լուկուլեան կոչունքներուն, ուր կ'ապրժէին հռչակել՝ ազնիւ ու զուտ գինիներու խաւեակներու առջև՝ թէ իսկական ուշադրութիւնը մ'է հաճոյքը, ախորժելի ցնորք մ'է ձշմարտութիւնը, և իմաստնոյն կեանքին նպատակն է անգործ հանգստութիւնը։

Բայց, թէպէտ շատ ախորժ կը զգար այսպիսի վիճաբանութիւններէ, սակայն իւր հոգւոյն վրայ բնաւ խոր տպաւորութիւն չէր գործեր, որովհետև որոշ կրօնք մը չէր դաւաներ։

Կատոն, իրեն համար էր միանգամայն մեծ և յիմար, և կեանքը կը նմանցնէր ովկիանոսին՝ իրարու ներհակ հողմերէ կատաղած ու փրփրած, որուն վրայ մարդը իւր իմաստութեան փորձով միայն կրնայ դիմագրել բուռն փոթորիկներու և ուղղել իւր անձին հողմակոծեալ նաւը։

Բան մը՝ որ մասնաւորապէս իրեն կարեւոր էր, որով և կը պարծէր, իւր ազողչ թոք, թիկունք, ջգեղ կերպարանք և շնորհալի քիթ ունենալն էր. և այս ձիրքերը միակ միջոցը կը նկատէր երջանկութիւնը ձեռք բերելու համար, ըլլալով ի ծնէ, գուցէ առանց իսկ գիտնալու, սկեպտիկ և եպիկուրեան, թէև երկու դպրոցն ալ կ'արհամարհէր։ Այսպէս, առանց

միտ դնելու թէ իւր գործերն ըստ Եպիկուրոսի էին կամ ոչ, յաճախ անոր հաւատարիմ հետեւողն էր, և մինչդեռ ինք սկեպտականութեան դէմ կը կռուէր, սակայն իբրև ստոյիկեան մը՝ փիլիսոփայութեան դպրոցներն կը նկատէր գրեթէ մըտաւոր ու բարոյական կրթութեանց մարզարաններ և ոչ այլ ինչ, և երբ վիճաբանութենէ կը յագենար, անտարբեր ուրիշ մարմնակրթանքներու և խաղերու՝ և կրկէսի արիւնալից տեսարաններու կ'անցնէր։

Չէր հաւատար ոչ աստուածներու, ոչ ճշմարտին, ոչ բարւոյն, ոչ երջանկութեան, այսուհանդերձ խորհուրդ կը հարցընէր հաւահմաներու, վհուկներու, և կարևորութիւն կ'ընծայէր նախապաշարումներու և գուշակութիւններու՝ հետամտելով անոնց, և արևելեան խորհրդաւոր արարողութեանց։

Բարի էր առհասարակ իր գերիներուն հետ, մերթ կատաղի և արտառոց կերպով անգթօրէն և անասնաբար անոնց հետ կը վարուէր։ Եւ կեանքն ալ կը նմանցնէր սափորի մը, աւելի կամ նուազ թանկագին, ըստ յատկութեան ըմպելւոյն որով լեցուն ըլլայ, և ինք, իրեն համար և ուզածին պէս՝ միտքը կը յօգնեցնէր միշտ

անոր լաւագոյնը գտնելու յոյսով։

. Իրեն համար ոչ մէկ անձի կամ ա-ռարկայի նկատմամբ սէր գոյութիւն չու-նէր. բայց շատ բաներ կը սիրէր, ի մի-ջի այլոց իւր վսեմ գլուխն ու գեղեցիկ ոտները, յատկանիշեր՝ իւր ազնուակա-նութեան։

Ի սկզբան հաճոյք կը զգար Հռովմի մէջ իր և իւր զուարթ, մեծաշուք կեան-քին, իր տարօրինակ ու հնարագէտ դէպ-քերուն վրայ խօսիլ տալով։ Բայց անկից ալ շուտով յոգնեցաւ, մարելով իւր մէջ նոյն իսկ յիմարութեան կրակը։

Բ

Փիչ ժամանակի մէջ, կիննա, վատնեց իւր հարստութիւնը և անյագ պարտատեր-ներ՝ կողոպտեցին այն քիչն ալ զոր ունէր։

Քանդուած, կործանած, խաբուած, ա-մէն բանէ զզուած, ձանձրացած՝ որ բը-նական արդիւնք է յափրանքի, կարծես յանկարծակի տարակոյսի, երկիւղի նոր ու տարօրինակ և վատ մտածութիւն մ'ունե-ցաւ։

Ինչը, անգործ կեանք, հաճոյք, հե-ւտութիւն, մարտի դաշտերու վրայ ստա-ցած փառքը, մարդկային մտքի և սրտի և փիլիսոփայական ուսմանց և արուես-տից մէջ եղած հետազօտութեանց իւր ծա-րաւը գոհացուցած, վերջապէս այն ա-մէն բան, ինչ որ կրնայ տալ կեանքը, ամէնքը ճաշակած ու վայլած էր առա-տապէս։

Եւ հիմա, նոր և անբացատրելի եր-ջանկութեան մը մտահոգութիւնը զինքը կը տիրապետէր, ու կը կարծէր, թէ գու-ցէ կեանքի ամենագեղեցիկ և ամենազնիւ մարդը դեռ նոր պիտի ճանչնար։

Ձեր կրնար մեկնութիւն մը տալ թէ ինչ բան էր իւր մտածութեան նիւթը, և այս խորհրդածութիւնն իրեն համար նոր վիշտ մ'էր որ գինք աւելի ևս բարոյապէս ճնշող անկումի մը կը մատնէր, ինք իր առջև իակ նուաստանալով։

Ասոր գիտակից, պիտի ուզէր խղդել ամէն ապստամբ և վրդովալից զգացում որ պիտի նորաբնձիւղէր իւր մտքին մէջ, պիտի ուզէր ինքզինք համոզել թէ կեանքը ուրիշ աւելի բան մը չէր քան ինչ որ ինք արդէն ըմբռնած ու վայելած էր։ Բայց ահարկու և անգուսպ տարակոյսը կը պատկերանար իւր մտքին մէջ, և չը կրնալով ահմանաւորուիլ այլևս իւր էութեամբ՝ կը ջոջափէր բոլոր Հռովմէական աշխարհն և մարդկութիւնն համայն։

Թէև հիմա ոչ ևս սկեպտիկ, կը նախանձէր անոնց խաղաղ զուարթութեան վրայ՝ չկրնալով սանձել ձայն մը՝ որ շառաչով դուրս կը պոռթկար իւր հոգւոյն խորէն. «Անմի՛տ ես, որ կ'ուզես ոչնչով անդունդ մը լեցնել»։ Երկու անձ գոյութիւն ունէին իւր մէջ, իրարու ներհակ. մին՝ զարմացած միշտ և զայրացած գինք տիրապետող երկիւղէն, իակ միւսը՝ միշտ տրամադիր անոր ծագումն ու պատճառը հետազօտելու անցեալ կեանքին մէջ։

Իւր ինչքը վատնելէ քիչ վերջ, կինն Աղեքսանդրիա մեկնեցաւ փոխ–հիւպատոսի պաշտօնով։ Իւր տիրութիւնն իրեն ընկերեց մինչև Պրինտիզի և բոլոր իւր ճանապարհորդութեան ժամանակ, և յոյսը՝ թէ արևելեան կեանքի շքեղութեանց մէջ նոր տպաւորութիւններ ու բարեկամութիւններ պիտի ունենար՝ որոնք պիտի կարենային վերջապէս ազատել գինք իւր անպիրելի ընկերակցէն՝ ի դերև ելաւ։

Որչափ զանդաղօրէն օրերն ու ամիսները կը սահէին, այնչափ տարակոյսներն ու կսկիծը կը յաւելուին իւր երկչոտ սրտին մէջ, ինչպէս կ'ուռճանայ Իտալիոյ ցորենը՝ և կը բազմապատկի Նեղոսի հողին մէջ, աւելի շքեղ երևոյթ ստանալով։

Ի սկզբան ուզեց խղդել իւր մտածութիւնները հաճոյքներու մէջ և Հռովմի կեանքն սկսաւ վարել։ Ի զո՛ւր։ Յետոյ անձնասպանութեան խորհեցաւ։

Արդեօք իւր բարեկամներէն քանին մահուան մէջ փնտռած էին իրենց հանգիստը, զոր կեանքը չէր կրնար տալ, և ինք այժմ զուրկ էր ամէն մխիթարութենէ և հաճոյքէ։ Եւ վարկեան մը, րոպէ մը միայն բաւական էր՝ մեռնելու՝ խաղաղութիւնը ձեռք բերելու համար։

Եւ արդէն ընելիքն որոշած էր, երբ տարօրինակ երազ մը գինք կեցուց։

Տեսաւ որ նաւակով գետէ մը կ'անցնէր։ Միւս եզերքին վրայ իր տիպրոքիները՝ վիշտերէ և նեղութիւններէ ընկճուած գեղուհիի մը կերպարանքին տակ՝ իրեն կը սպասէր, նա զինք քաղցրութեամբ մ'ողջունեց, ըսելով. «Ես հոս կանխեցի եկայ որ զքեզ դիմաւորեմ»։

Կլինա, առաջին անգամ իր կեանքին մէջ, վախցաւ և հասկցաւ, թէ և ոչ իսկ անդրգեւեզմանեան կեանքի վրայ կրնայ մոռնալ առանց տխրութեան, ուրեմն սա մինչև հո՛ն իսկ իրեն պիտի ընկերանար։

Այն ժամանակ, իբրև միակ դարման, միտքը դրաւ Սերապէումի փիլիսոփաներուն դիմել, որոնք կը յուսար իր վիշտերուն դժուարին առեղծուածը լուծէին, բայց ոչ ոք կրցաւ։ Այնուհանդերձ անոնք մեծ պատուասիրութեամբ իրենց մէջ ընդունեցան, կոչելով զինք ὁ μονοετὸς, մակդիր՝ որ բարձրաստիճան և գիտուն հոովմայեցիներուն վերապահեալ էր։ Ի սկզբան շատ մխիթարուեցաւ ասով, յետոյ իբր ծաղրածութիւն մը նկատեց գայն՝ որովհետև իր գիտութիւնը շատ անբաւական կը տեսնէր, քանի որ չէր կրնար խելամուտ ըլլալ զինք խոշտանգող անգութ տարակոյսին։

Այս տեսնելս, քաղաքին համբաւաւոր և ամենագիտուն փիլիսոփան էր ազնուականն Տիմոն Աթենացին, որ տարիներէ ի վեր Աղեքսանդրիա կ'ապրէր հոն եգիպտական գիտութիւնն ուսումնասիրելու համար։ Կ'ըսուէր թէ ինք փիլիսոփայական ամէն ուսում և վարդապետութիւն գիտէր և մեղմաբարոյ նրբամիտ մարդ մ'էր։ Կլինան շուտով ըմբռնեց թէ որքան կը տարբերէր միւս չոր ու իմաստակ փիլիսոփաներէն, և քիչ տեսնէն սերտ բարեկամութիւն հաստատեց յարգելի ծերունիին հետ։

Տիմոն ուրիշ գաղափար մ'ունէր մարդուն երկրիս վրայ ունեցած առաքելութեան նկատմամբ, որուն վրայ մեծ պերճախօսութեամբ կը ճառէր, բայց խոր տխրութիւնը՝ որով դրոշմուած էին ընդհանրապէս իր խօսքերը՝ երիտասարդ հոովմայեցւոյն սէրն իրեն ձգել տուաւ, որ մէկէ աւելի անգամներ փորձութիւն ունեցաւ հարցնելու իր այդ տխրութեան պատճառը և միևնոյն ժամանակ անոր առջև բանալու իր սիրտը։

Գ

Երեկոյ մը, արևը մտնելէն քիչ վերջ, Տիմոն և Կիննա մինակ էին պատշգամին առջև որ դէպ ի ծով կը նայէր և հանդերձեալ կեանքի վրայ կը վիճէին։ Քաղցըրօրէն տխուր ժամը և իմաստունին տաք ճարտասանութիւնը՝ վստահութիւն մը ներշնչեցին երիտասարդին, որ անոր ձեռքէն բռնած՝ խոստովանեցաւ իւր կեանքին մեծ թախիծն և թէ ինչո՛ւ կը ջանար փիլիսոփաներուն մօտենալ։ Գոնէ — ըսաւ վերջապէս — մխիթարութիւն մ՚ունիմ որ գքեզ ճանչցայ. և եթէ դու հիմա չլուծես ինծի կեանքիս գաղտնիքը, ապահովապէս ոչ ոք պիտի կարենայ լուծել զայն այս աշխարհիս վրայ։

Տիմոն երկար ժամանակ նայեցաւ հայելակերպ ջուրին որ իւր առջև կը տարածուէր, որուն մէջ կ՚անդրադառնային լուսնին սպիտակ շողերը, յետոյ ըսաւ.

— Դիտա՞ծ ես բնաւ թռչնոց երամները որ ձմրան մօտ խաւարչտին հիւսիսէն դէպ ի մեզ կու գան։ Գիտե՞ս թէ ինչ բան կը փնտռեն Եգիպտոսի մէջ։

— Լոյս և ջերմութիւն.

— Մարդկութեան հոգին ալ լոյսը կը փնտռէ՝ որ ուրիշ բան չէ բայց եթէ ճըշմարտութիւնը, և ջերմութիւնը՝ որ է սէրը։ Բայց թռչունները գիտեն ո՛ւր է երջանկութիւնը, մինչդեռ մարդիկ կը թափառին չոր ու ցամաք ճամբայներ՝ վիշտերով ու տխրութեամբ լի։

— Ինչո՛ւ համար, ով ազնիւ Տիմոն, մարդիկ չեն կրնար ճանապարհը գտնել։

— Ժամանակ մը, խաղաղութիւնը աստուածներու մէջ կը գտնուէր, բայց այժմ հաւատքը պակսած է, ինչպէս կը պակսի իւղը կանթեղին մէջ։ Կ՚ըսուի թէ փիլիսոփայութիւնը՝ հոգիներու համար ճշմարտութեան արեգակն է. բայց դու ալ գիտես, որ Հռովմի և Աթէնքի ճեմարաններուն մէջ փիլիսոփայութեան աւերակներուն վրայ կը բազմին սկեպտիկեանները որոնք խաղաղութեան պատգամաւորներ կը կերպարանին, մինչդեռ ընդհակառակըն խռովութեան պատճառ են։ Կոյր ենք, խաւարի մէջ կը խարխափենք, և ի զո՛ւր ձեռքերնիս տարածած՝ մութին մէջ ելքի դուռը կը փնտռենք։

— Դո՛ւ ալ չկրցար գտնել, Տիմոն.

— Փնտռեցի, բայց չգտայ։ Դու հաճոյքներու մէջ փնտռեցիր, ես խոկման մէջ. և երկուքս ալ խաւարն է պատեր։

1004
59/IA
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922

Դու չես միայն տանջուողը, բարեկամ, քու մէջդ աշխարհի ոգին ալ կը տանջուի: Եւ որչափ ժամանակէ ի վեր չես հաւատար այլ ևս աստուածներուն:

— Հռովմի մէջ անոնք հասարակաց պաշտամունք կ'ընդունէին, և միշտ Ասիայէն ու Եգիպտոսէն նորեր կը բերուին. բայց անկեղծօրէն ոչ ոք կը հաւատայ անոնց, բաց ի գուցէ բանջարավաճառներէն որ ամէն օր գիւղէն դէպ ի քաղաք կ'իջնեն:

— Եւ անոնք են միայն որ զժբաղդ չեն:

— Ընտարակոյս, ինչպէս անոնք ալ որ կենդանիներ ու բոյսեր կը պաշտեն:

— Անոնք ալ, որ կուշտ գրասաններու պէս հեղգութեամբ ու քնով կ'ապրին:

— Ըսէ՛ ինծի, ուրեմն կ'արժէ՞ ապրիլ:

— Բայց մենք գիտե՞նք թէ ինչ բան մեզի պիտի տայ մահը:

— Բայց այն առեն ինչ տարբերու-թիւն կայ քու և սկեպտիկեաններուն մէջ:

— Սկեպտիկեանները խաւարին կը համակերպին կամ անոր համակերպիլ ցոյց կու տան, և ես անկէ կը տանջուիմ:

— Եւ անոր մէջ չե՞ս նշմարեր փըրկութիւնը:

Տիմոն լռեց վայրկեան մը, յետոյ, իբրև խոր մտածումէ մը սթափած, պատասխանեց:

— Կը սպասեմ:

— Ուսկի՞ց:

— Չեմ գիտեր:

Տիմոն յաղթանակի նշան մ'ըրաւ, հառաչելով կախեց գլուխն և շուրջը տիրող լռութեան մէջ՝ շարունակեց ցած ձայնով:

— Զարմանալի է, բայց մերթ ինծի կ'երևնայ որ եթէ աշխարհ ուրիշ աւելի բան մը չունենար քան ինչ որ մենք գիտենք, և եթէ մենք չկարենայինք ըլլալ աւելի քան այն ինչ որ ենք, պիտի չզգայինք այս անձուկն որ զմեզ կը տանջէ: Ասոր համար՝ ես նոյն ինքն հիւանդութեան աղբիւրին մէջ կը փնտռեմ բժշկութեան յոյսը: Դէպ ի Ոլիմպոս և փիլիսոփայութիւն եղած հաւատքը մեռած է. բայց առողջութիւնը կրնայ մեզի գալ ճշմարտութենէ մը զոր կ'անգիտանանք դեռ:

Հակառակ սպասածին, այս մտերիմ խօսակցութիւնը մեծ մխիթարութիւն մը պատճառած էր կիննայի: Լսելով որ ոչ միայն ինք այլ բոլոր աշխարհ կը տառապէր, իրեն թուեցաւ թէ մէկը իր ուսերուն վրայէն մեծ բեռ մը վերցուց և զայն ուրիշ միլիոնաւոր ուսերու վրայ բաժնեց:

Դ

Այս տեսակցութենէն վերջ, կիննայի և ծերունի յոյնին բարեկամութիւնն աւելի սերտ եղաւ. ամէն օր իրարու կ՝այցելէին և մտերմաբար իրենց մտածութիւնն ու հայն ու ջուրը իրարու մէջ կը բաժնէին։

Թէպէտ կիննա պատրանքներու և վիշտերու ենթարկուած էր, սակայն կը զգար թէ դեռ երիտասարդ էր և աշխարհ կըրնար իրեն համար ո՛և է անծանօթ հըրապոյր մը պահած ըլլալ։ Եւ իրաւցնէ մարքէն չանցած ու բոլորովին անակընկալ հրապոյր մը գտաւ ճիշդ Տիմոնի տունը, անոր աղջկան Անթէայի մէջ։

Օրիորդին համբաւը, հո՛ն Աղեքսանդրիա, ոչ նուազ էր հօրմէն։ Ջայն կը յարգէին հռովմէական տիկիններըը, Յոյներն, Ասրապէոմի փիլիսոփաներն ու ժողովուրդը. Տիմոն կանանոցի մը մէջ փակած չէր զայն. և որովհետև հազիւ պատանեկութեան մէջ մտած, սկսեր էր իւր հօր հետ կարդալ յոյն, լատին և եգիպտական գրքերը, յարըմնա հասնելուն պէս՝ անոր մտերիմ ընկերն եղած էր ու մասնակցած խոր հակաճառութեանց, և իբր նոր Արիաննա,

քաջ կ՝առաջնորդէր զայլս փիլիսոփայութեան խառնակ լաբիւրինթոսներէն։

Բայց ասոր՝ գրեթէ սրբազան խորհըրդաւոր կախարդանք մը զայն կը շրջապատէր և յաճախ մարգարէական երազներ ու անսովոր յափշտակութիւններ կ՝ունենար, յորում կը տեսնէր այնպիսի բաներ որ անտեսանելի են սովորական մահկանացուներուս աչքին։

Եւ ծեր փիլիսոփայն զանիկայ կը սիրէր իւր հոգւոյն պէս, ու մինչև իսկ կը վախնար զայն կորսնցնելէ։ Անթէա կը պատմէր, թէ երազներուն մէջ ատեպ կը տեսնէր չարագուշակ ուրուականներ և աստուածային գեղեցկութեան լոյս մը, և չէր գիտեր որ այս լոյսն իրեն համար կեանքի թէ մահուան աղբիւր մ՝էր։

Տիմոնի տունը յաճախող եգիպտացիք զինք Լոտուածաղիկ կ՝անուանէին, թերևս անոր համար որ այս ծաղիկն աստուածային կը նկատուէր՝ Նեղոսի ափանց վրայ, կամ գուցէ անոր համար որ՝ ով Անթէայի դէմքը տեսներ պիտի մոռնար ամէն գեղեցկութիւն։

Իւր գեղեցկութիւնն ալ հաւասար էր իւր խմաստութեան։ Եգիպտոսի կիզիչ արևը չէր մթագներ անոր սպիտակ դէմքը՝ նման թափանցիկ խեցւոյ մը՝ որ արշա-

լոյսի ճառագայթներով կը շողայ։ Աչքերը կարծես Նեղոսի գոյնն առած էին, և նայուածքը խոր ու խորհրդաւոր էր ինչպէս մեծ գետին ջրերը։

Երբ կինն առաջին անգամ զայն տեսաւ և անոր խօսակցութիւնը լսեց, տուն դառնալով մեծ փափաք մը զգաց խորան մը կանգնել սրահին մէջ և գոյգ մը սպիտակ աղաւնի զոհել անոր. հանդիպած չէր բնաւ ոչ նման հոգիի մը՝ ո՛չ նման դէմքի մը։ Եւ իակոյն սիրեց զայն նոր ու խոր սիրով մը որ այնչափ քիչ կը նմանէր իւր անցեալ սէրերուն, որչափ Անթէա այն կիներուն՝ զորս կանխաւ ճանչցած էր։ Անթէայի հետ՝ աղքատ և միայնակ՝ երջանիկ պիտի ըլլար, առանց անոր զժբաղդ, եթէ հարուստ ու հզօր ալ ըլլար կեսարու պէս։ Եւ ինչպէս փոթորիկն ամէն բան կը տապալէ ու կը տանի, այսպէս անոր վրայ ունեցած իւր սէրը՝ իրմէն կը յափշտակէր իւր միտքը, սիրտը, օրուան զբաղանքները, գիշերուան հանգիստն ու իւր էութիւնն ու կեանքը բոլոր։

Քիչ վերջ, նոյն սէրն Անթէայի սրահին մէջ ալ մուտք գործեց։

— Երանի՛ քեզ, կիննա — կ'ըսէին իրեն բարեկամներն.

— Երանի՛ քեզ, կիննա՛ — կրկնեց և՛ ինքն, երբ Անթէայի աստուածային շքեղութիւնքներն ամուսնութեան սրբազան բառերն արտասանեցին. — Որ դուն ևս կայիտու, ևս հո՛ն ևմ կայիա — և իւր երջանկութիւնն անհուն թուեցաւ իրեն՝ ինչպէս անսահման ովկիանոսի ջրերը։

Ե

Մանկամարդ հարսը հօրենական յարկին մէջ գրեթէ աստուածային պատիւներ կ'ընդունէր. նա կիննայի համար՝ շնորհքն էր, խնամատարիւնը, յոյսը:

Բայց ինք չէր խորհած բնաւ, բաղդատելու իր երջանկութիւնը ծովու անհունութեան հետ, թէ ալիքները միշտ կը շարժին և երբեք չեն դադարեր:

Հազիւ տարի մը բոլորած, Անթէա հիւանդացաւ՝ խորհրդաւոր ու ծանր հիւանդութեամբ մը. և իր երազներն սկսան տակնուվրայ ըլլալ ահարկու ուրուականներու երևումով, որոնք զանգազօրէն իր կեանքը կը մաշէին:

Դէմքը ժժգոյն, նիհար, սպիտակ, ձեռները թափանցիկ, ակնակապիճները փոսացած, Անթէա երթալով սպիտակ լոտոսածաղկին կը նմաներ: Իր տան վրայ յաճախ անգղները կը սաւառնէին՝ չարագուշակ նշան մօտալուտ մահին:

Իր տեսիլներն օր աւուր աւելի ահաբեկիչ կ'ըլլային: Կէս օրուան մօտ, շուրջը կը կարծէր լսել անտեսանելի էակներու ոտնաձայններ և տեսնել մահատիպ դէմք մ'որ աչքերն իր վրայ յառած գինք կը հրաւիրէր: Ջերմոտ սարսուռ մը, և մահագոյժ պաղ քրտինք մը գինք կը պատէր, և սարսափահար աղջան մը պէս ամուսնոյն կը դառնար ու անոր գիրկն իյնալով կը գոչէր.

— Ազատէ՛ գիս, կայիո՛ս, ազատէ՛ գիս:

Եւ կայիոս շուտով անդունդներու մէջ պիտի թօթափէր անշուշտ այն չար ոգիները, բայց ի զո՛ւր շուրջը կը դարձնէր աչքերը, որովհետեւ ոչինչ կը տեսնէր: Ո՜հ ինչպէս տխուր էին իրիկուան ժամերը միայնութեան ու լռութեան մէջ, երբ մեռնող արևուն խոտոր ճառագայթները քաղաքը կը պարուրէին, և ծովուն ալիքներն իրենց մէջ անդրադարձնելով երկինքը՝ տըխուր բոցերու խուրձեր կ'արձակէին, և մերթ կը լսուէին անգղերուն ճիչը, որոնք իր գլխուն վերև կը սաւառնէին:

Եւ Անթէայի տեսիլներն աւելի յաճախ կը կրկնուէին և աւելի սպառնալից, միշտ և ամէն օր:

Նշանաւոր բժիշկներ, ամէն տեսակ իմաստուններ իրենց գիտցած դարմանները մատուցած էին — ի զո՛ւր:

Եգիպտական թանթրուներուն և պետուիններու սրինգներուն ձայները կարող չէին հիւանդը զբաղեցնելու և ցրուելու ա-

նոր երկիւղալից պատկերներն, որ կը չարչարէին զայն։

Արեւմտեան դէմ, երբ արեգակը՝ դիտողներու աչքին կը կարծուի կրակէ ծովու մը մէջ մխրճիլ, ապակենման աչքերով դիակը՝ ձև և կերպարանք կ՝առնէր և իւր աղետալի նայուածքը հիւանդին դարձնելով՝ չորչրուկ մատներով կը կանչէր զայն։

Երբեմն կը կարծէր թէ ուրուականին բերնէն հեղեղօրէն միջատներ դուրս կու գային, որոնք ամէն կողմանէ մօտենալով իւր վրայ կը փակչէին։

Անթէայի կեանքն արհաւիրքով լի էր, և լոկ ահեղ ուրուականներու մտածութիւնը և յիշատակն անգամ զայն այնպիսի լքումի, յուսահատութեան կը մատնէին որ կիննայէն իսկ կ՝ըղձար ու կը խնդրէր մահը։ Կիննան, որ արեան վերջին կաթիլն անգամ կու տար Անթէայի փրկութեան համար, կը քաջալերէր այն փափաքի արտայայտութենէն և դողալով կ՝երնակայէր անոր գեղեցիկ գլուխը կիսամեռ, թոյլ, աչքին բիբերն ընդ միշտ մարած և սպիտակ կուրծքը պատառուած ձեռքէ մը՝ որ զայն այնչափ կը սիրէր։

Ո՜հ, ո՜չ, թող հազար տանջանքով մեռնի, քան ես անոր արիւնը մտնեմ. ո՜չ երբե՛ք։

Յոյն բժիշկ մ՝ըսած էր իրեն թէ Եկատէն էր Անթէայի տեսած ուրուականը. իսկ այն բազմութիւնը՝ հիւանդին անդառնալի վիճակը կը ներկայացնէր։ Եւ կիննա, որ բնաւ չէր հաւատար աստուածներուն՝ Եկատէի զոհ մատոյց։

Մտածեցին հիւանդին աչքերը սև ու խիտ քօղով մը ծածկել, բայց օգուտ մը չունեցաւ։

Մութ ու նեղ խղիկի մը մէջ փակեցին զայն. սակայն ուրուականներն կարծես պատերը կը ճեղքէին և իրենց տխուր լոյսով խրճիթը լուսաւորելով՝ աւելի երկիւղալից կը տեսնուէին հոն։

Անթէա գիշերն այնպիսի խոր թմբիրի մը մէջ անցուց, որ եթէ նոյն իսկ քիչ մ՝իրեն հանգիստ ալ կու տար, կիննան սոսկալի տարակոյսի մէջ էր թէ մի գուցէ նա այլ ևս չարթննայ։ Այնչափ տկար ու թոյլ էր որ չէր կրնար ոտքի վրայ կենալ և միշտ պատգարակով կը քալցնէին։

Կիննայի հին տխրութիւնը, կրկին ծընաւ և առաջինէն աւելի սաստիկ, վախնալով Անթէայի կեանքէն, և նախապաշարուած, թէ իւր գեղեցկուհւոյն հիւանդութիւնը խորհրդաւոր կապ մը գուցէ ունենար այն բանին հետ, որուն վրայօք խօսած էր Տիմոնի՝ երբ մտերմաբար իւր

սիրան անոր յայտնեց։

Գուցէ նոյնը կը մտածէր նաև Տիմոն, սակայն Կիննա կը վախէր անոր հարցում մ՚ուղղելու։

Աչսուհանդերձ , յուսահատաբար կը պաշտպանէր Անթէան։ Եւ ուզեց զայն Մեմֆիսի շրջակայքը տանիլ։ բայց երբ տեսաւ թէ բուրգերուն ստուերներուն տակ բարեւոքում մը չտեսնուեցաւ հիւանդին վրայ, Աղեքսանդրիա վերադարձուց, ուր վհուկներու, կախարդներու և խաբեբաներու բազմութեամբ մը շրջապատեց զայն։ Գրեթէ այլ ևս յոյս չունէր, անոր համար ամէն միջոցի կը ձեռնարկէր։

Այս ժամանակներս, Յովսէփ անունով հրեայ երևելի բժիշկ մը, կեսարիայէն Աղէքսանդրիա եկաւ, զոր շուտով կանչել տուաւ Կիննա։ Յովսէփ, կռապաշտ չըլլալով հերքեց Անթէայի եկատէն հալածուած ըլլալու ենթադրութիւնը, և կարծիք յայտնեց ընդհակառակն, թէ հաւանաբար տիկինը դիւահարած էր։ Ուստի, խորհուրդ տուաւ ամուսնոյն որ զայն Եգիպտոսէն հեռացնէ, ուր բաց ի դէւերէն կրնային անոր վնասել Տէլթայի ճահիճներուն ժանտահոտերն, և Երուսաղէմ փոխադրել՝ քիչ մ՚ալ անոր չոր ու առողջարար օդը փորձելու համար։

Կիննա, սիրով հաւանեցաւ, վասն զի նոյն ժամանակ Երուսաղէմի դատաւորը Պոնտոս Պիղատոս , իրեն բարեկամն էր։

Պիղատոս զիրենք գրկաբաց ընդունեցաւ և իրենց տրամադրութեան յանձնեց իւր ամարանոցն, որ քաղաքին մօտերը կը գտնուէր։

Բայց հոս ալ Կիննայի յոյսերը շուտով ցնդեցան, որովհետև մահուան ուրուականը, ինչպէս որ չէր ձգած բնաւ զԱնթէա իւր բոլոր ճամբորդութեան մէջ, կը շարունակէր աւելի ահարկու երևիլ նաև Երուսաղէմի մէջ։

Եւ սարսափի ու յուսահատութեան օրերն սկսան դարձեալ։

Զ

Թէպէտև առտու էր, ծածքը լի էր աուտերով և աղբիւրին ջրերը կը ցայտէին չորս դին, սակայն անտանելի տաք մը կ՚ընէր նախագաւթին մէջ, և սպիտակ մարմարները կրակ դարձեր էին։ Տանը քով, գեղեցիկ արմաւենիի մը տակ, ուր մերթ զով օդ մը կը շնչէր, բերել տուաւ կիննա Անթէայի պատգարակը՝ խնձորե-նիի և յակինթիծաղիկներով զարդարուն։ Քեռոյ անոր քով նստեցաւ, և ալապաս-տրէ ձեռները բռնելով, հարցուց.

— Լաւ կը զգա՞ս, անո՛ւշս։

— Այո՛ — պատասխանեց նուաղ ձայ-նով, և աչքերը փակեց քնանալու պէս։

Խոր լռութիւն մը կը տիրէր. միայն քա-մին կը շշնջէր ճիւղերուն մէջ, և գետնի վը-րայ՝ պատգարակին մօտ փայլող խոտերուն մէջ ծղրիթները կ՚երգէին։

Ինչ յետոյ հիւանդն աչքերը բացաւ։

— Կայիոս — հարցուց — ատո՞յք է թէ հոս փիլիսոփայ մը կայ որ հիւանդները կը բժշկէ։

— Հոս մարգարէ կը կոչեն զայն — պա-տասխանեց կիննա։

— Ես կ՚ուզէի քեզի համար բերել տալ, բայց կարծեմ խաբեբային մէկն է։ Եւ, որովհետև ժողովրդեան հաւատքին կը դպչէր, ամբաստանուեցաւ և դատուորն ալ զինք մահուան դատապարտեց և այ-սօր իսկ պիտի խաչուի։

Անթէա գլուխը խոնարհեցուց։

— Ժամանակը պիտի առողջացնէ զգ-քեզ — ըսաւ Կայիոս, տեսնելով որ տխրու-թիւնն աւելի կը մթագնէ անոր դէմքը։

— Ժամանակը՝ մահուան ծառայն է, ոչ թէ կեանքին — ըսաւ մեղմով հիւանդը։

Ու դարձեալ լռութիւն պատեց։ Շուր-ջը, գետնի վրայ կը պլպլային պսակաձև լոյսեր որոնք ձևաձած էին արմաւենիի խիտ տերևներէն ներս թափանցող արևու ճառագայթներէն, ծղրիթները կ՚երգէին դեռ միապաղաղ ձայնով, մողէզներն պա-տերուն ճեղքերէն դուրս կու գային և կրակ դարձած քարերուն վրայ կը կե-նային։

Կիննա, ամէն վայրկեան Անթէայի կը նայէր, մտածելով թէ այլ ևս ամէն բան կորսուած էր և քիչ առենէն այն պաշ-տելի էակէն ուրիշ բան պիտի չմնար՝ բայց միայն ափ մը մոխիր՝ գերեզմանի նկուղին մէջ։ Եւ արդէն ծաղկազարդ գա-հաւորակին մէջ տարածուած՝ մեռեալի մը երևոյթն ունէր նա։

— Ես ալ քու եաևէդ պիտի գամ – կը մտածէր կիննա։

Լռութեան մէջ՝ ոտնաձայներ լսուեցան։ Անթէայի դէմքը կուճի պէս ճերմկցաւ, կիսափակ շրթներն անյագաբար օդ կը կլլէին, կուրծքը տառապեցուցիչ շնչառութենէն կը հեւար. թշուառ մարտիրոսը կը վախէր որ մի՛ գուցէ կրկին երևնան ապակեփայլ աչքերով դիակի աւետաւոր ուրուականներն։ Բայց կիննա անոր ձեռքը բռնեց որ հանդարտի։

— Մի՛ վախնար, Անթէա. այդ ոտնաձայնը ես ալ կը լսեմ։ — Եւ յետոյ աւելցուց։ — Պոնտոսն է որ մեզի կու գայ։

Եւ յիրաւի, ծառուղւոյն խորէն, երկու գերիներու հետ դատաւորն երևցաւ։ Մի-ջահասակ, կլոր դէմքով, ածելուած երեսով և արուեստակեալ վեհ կերպարանքով և արտաքսապէս մտածկոտ ու յոգնած մարդ մ՛էր։

— Ողջոյն քեզ, ազնիւդ կիննա, և քեզ աստուածայինդ Անթէա — ըսաւ, մրա-նելով արմաւենւոյն ստուերին տակ։ — Ախ այսպիսի ցուրտ գիշերէ մը վերջ, ինչ խղդուկ օր յաջորդեց։ Այս օրը թող նպաստաւոր ըլլայ ձեզի և առողջութիւն պարգևէ Անթէայի որ իր գահաւորակը զարդարող ծաղիկներուն պէս բացուի։

— Ողջոյն քեզ, – պատասխանեց կիննա։

Դատաւորը նստաւ, Անթէային նայեցաւ, յօնքերը կնճռեց և ըսաւ.

— Միայնութիւնը՝ ձանձրութիւն և վիշտ կը պատճառէ, և բազմութեան մէջ՝ ամէն երկիւղ կը փարատի։ Կ՛ուզէք խորհուրդ մը տամ ձեզի։ Դժբախտաբար մենք ո՛չ Անտիոք կը գտնուինք և ո՛չ Աղեքսանդրիա. հոս ո՛չ թատրոն կայ, ո՛չ կրկէս, և եթէ կրկէս մ՛ալ բացուելու ըլլայ, մոլեռանդ ժողովուրդը զայն կը կործանէ։ Հոս ուրիշ բան չի լսուիր բայց միայն Օրինաց բառը, և ամէն բան այս օրինաց կը բաղխի. ես կ՛ընտրէի Ակիւթիոյ մէջ ապրիլ։

— Ի՞նչ ըսել կ՛ուզես, Պիղատո՛ս։

— Ո՛հ, նիւթէն հեռացայ։ Ըսել կ՛ուզեմ թէ բազմութեան մէջ ամէն վիշտ կը փարատի. և այսօր կրնաք հանդիսի մը ներկայ գտնուիլ. երեք հոգի խաչի վրայ պիտի մեռնին։ Վերջապէս ոչինչէն լաւ է։ Ցետոյ, Զատկական տօներու առթիւ շրջակայներէն բոլոր քաղաք կու գան ամէն տեսակ մուրացիկներ, տաբօրինակ և խառնիխուռն խուժան մը, զոր տեսնելով կը զուարճանաք։ Դատապարտեալները կրնաք մօտէն դիտել որոնք յուսամ թէ քաջութեամբ կը մեռնին։

Անոնցմէ մէկը, եզական էակ մ'է, որ Որդի Աստուծոյ կը կոչէ ինքզինք, աղաւնիի մը պէս միամիտ է, և ստոյգն ըսեմ՝ այնպիսի բան մը չէ ըրած որ դատապարտութեան արժանի ըլլայ:

— Եւ դու վճռեցիր որ խաչի վրայ մեռնի՞:

— Գլխացաւէ ազատ կ'ուզէի ըլլալ. նաև կը վախնայի տաճարին շուրջն աղմկող պիծակներու բոյնին ձեռք զպցնել: Աբդէն իմ վրայ շատ գանգատներ կը ղրկեն ի Հռոմ: Եւ յետոյ, նոյն իսկ անիկայ Հռոմի քաղաքացի մը չէ:

— Բայց ասով դատապարտեալին տանջանքը չնուազիր — փսփսաց Անթէա:

Դատաւորը չպատասխանեց, բայց դէմքը կը մատնէր իւր ներքին բուռն խռովքը՝ որ ունայն ջանքեր կ'ընէր իր գործած անիրաւութիւնն արդարացնելու համար: Յետոյ, ըսաւ ինքն իրեն:

— Եթէ կայ բան մ'ուսկից կը խորշիմ, ծայրայեղութիւնն է, և ամէն բանի մէջ արդար չափը կ'ուզեմ պահել: Եւ սակայն աշխարհի վրայ չկայ անկիւն մ'ուր այս սկզբունքը ամէնէն աւելի զանց առնուած չըլլայ: Այս զիս խորապէս կը վշտացնէ: Մարդիկ ու բնութիւնը կարծես երդում ըրած են հոս իմ խաղաղութիւնս վրդովելու միշտ:

Ջէ՞ք տեսներ: Աբդէն գարուն է, սակայն գիշերը դեռ ցուրտ կ'ընէ, և օրուան մէջ տաքէն կը խղդուինք. ճամբայները մեր ոտները կը խաշին, դեռ նոր արեւը ծագեցաւ՝ կէս օրուան պէս զժուար կը շնչուի: Իսկ մարդի՞կը: Լաւ է խօսքը փոխել: Եւ ես սոխպուած եմ հոս ծնալու:

Կ'ըսէի ուրեմն, որ երթաք ու խաչեցութեան ներկայ ըլլաք այսօր. ապահով եմ որ Նազովրեցին քաջութեամբ պիտի մեռնի: Երևակայեցէ՛ք. հրաման տուի որ զանիկայ ձաղկեն, յուսալով մահուընէ փրկել — ո՛հ, անգութ չեմ ես, — բայց ձաղկելու ժամանակ գառան մը պէս կը համբերէր, ու ժողովուրդը կ'օրհնէր. մինչդեռ վէրքերէն արիւնը կը հոսէր, ինք աչքերը երկինք վերուցած կ'աղօթէր: Ամենէն եզական մարդը՝ որ տեսած եմ կեանքիս մէջ: Կինս զիս հանդարտ չթողուր. — մի՛ ձգեր որ անմեղ մը մեռցնեն — կը կրկնէ ինձ առտուընէ ի վեր: Ես ալ չէի ուզեր. երկու անգամ դուրս եկայ առեանէն՝ մոլեգնեալ քահանայից ու այն ամբոխուր ռամկին հետ խօսելու համար, բայց ամէնն ալ միաբան կատաղութեամբ կը գոռային «ի խաչ հան զդա»:

— Եւ դու զիջա՞ր — հարցուց Կիննա:

— Եթէ չզիջանէի, բոլոր քաղաքը կը

խռովէր. եւ ես հո՛ս խաղաղութիւնը պահելու համար դրուած եմ: Ծայրայեղութենէ կը խորշիմ, ըսի քեզի, և սաստիկ յոգնած եմ: Ցետոյ, այս մարդն անծանօթ մ'է, ոչ ոք կը հարցապնդէ գիս. լաւագոյն է մէկ անձ մը զոհել հասարակաց բարւոյն համար: Յաւելի՛ է որ Հռովմի քաղաքացի չէ:

— Աբեգակը՝ միայն Հռովմի վրայ չը ծագիր, ըսաւ Անթէա:

— Ատուածայինդ Անթէա, գիս մի փորձուիթեան մատներ: Աբեգակը Հռովմի իշխանութեան բոլոր սահմանները կը լուսաւորէ, բայց ազմուկներն ու խռովութիւնները գանիկայ կը տկարացնեն: Կեսար միայն կրնայ կեանք շնորհել, ո՛չ ես: Կիննա ալ գիտէ՝ թէ անգամ մ'որ դատավճիռն արտասանուած է, չէ կարելի եա առնուլ: Այնպէս չէ՞, Կայիո՛ս:

— Այո՛, ճշմարիտ է:

Բայց այն բառերն Անթէայի վրայ անախորժ տպաւորութիւն մը գործեցին, և ըսաւ ինքն իրեն.

— Ուրեմն առանց յանցանքի մ'ալ մէկը կրնայ չարչարուիլ ու մեռնիլ:

— Առանց մեղքի մարդ չկայ աշխարհիս վրայ — ըսաւ Պիղատոս: — Սակայն Նազովրեցին ոչ մէկ չարիք գործած չէ, և ասոր համար ես ալ իբրև դատաւոր, ձեռքերս լուացի, բայց, իբրև Հռովմի քաղաքացի, չեմ կրնար չգատապարտել իր վարդապետութիւնը: Երկար խօսեցայ իրեն հետ, հետազօտեցի իր ամենանուրբ խորհախորհուրդ մտածութիւնները, և իր տեսութիւններն ինձի անտրամաբան և տրօրինակ կ'երևնան: Պիղիլն ալ պէտք է բանաւոր նպատակ մ'ունենայ: Առաքինութիւնն ալ իր չափն ունի, կ'ընդունիմ. ստոյիկեաններն ալ կ'ըսեն թէ պէտք է վիշտերուն համբերութեամբ և համակատարութեամբ տանիլ. բայց ասով չեն հրաժարիր կեանքի զուարճութիւններէն, հրճուտութենէ, օրուան հացէն: Ինչ պիտի ըսեն ինձի, օրինակի համար, երբ իմ տունս ապաստանարան ընեմ այն թշուառներուն՝ որոնք Յոպպէի դռնէն դուրս՝ ահռելական տակ պառկած են. չիմա՛ր, այնպէս չէ՞:

Պիղիլի վարդապետութիւն մ'է զոր կը քարոզէ Նազովրեցին, և մարդիկ այնչափ լաւ, այնչափ բարեացակամ կ'ուզէ ըլլան, որ պէտք են, կ'ըսէ, Հռովմայեցիք և Հրեայք, Եգիպտացիք և Ափրիկեցիք ամէնքը հաւասարապէս զիրար սիրեն: Եւ ոչ միայն կը սովրեցնէ, այլ և գործով ցոյց կու տայ, և իւր կեանքը բոլոր

բարեբարութիւն և աղօթք մ'է: Բայց — աւելցուց — իմաստութիւն է ժամանակին համեմատ կարծիքը վերապահել՝ երբ չե՛ն ախորժիր:

Ինքզինք Աստուծոյ Որդի կը հռչակէ. բայց չի՞ տեսներ որ այս կերպով հաւատքը հիմէն կը խախտէ՝ ի վնաս մարդկութեան: Ի՛նչպէս կ'ուզէ, այնպէս թող մտածէ. սակայն իրեն թող վերապահէ իւր կարծիքն և ուրիշներունը յարգէ: Այս է իմ համոզումս:

Ես աստուածներուն չեմ հաւատար, բայց կը հաւատամ որ կրօնքը հարկաւոր է իբրև կրքերու սանձ մը, ու ես ալ հրապարակաւ իմ հաւատքս կը դաւանիմ:

Միւս կողմանէ — կը շարունակէր — Նազովրեցին պէտք չէ մահուընէ վախնայ որովհետև կ'ըսէ՝ թէ յարութիւն պիտի առնէ:

Կիննա և Անթէա զարմացած իրարու կը նայէին:

— Յարութիւն պիտի առնէ:

— Եւ երեք օրէն, ո՛չ աւելի ո՛չ նուազ. ինչ որ կը հաստատեն նաև իւր աշակերտները: Ես մոռցայ ասիկայ իրեն հարցնելու, սակայն կարեւորութիւն չունի, քանի որ մահը ամէն խոստումէ կը փրկէ: Նոյն իսկ եթէ յարութիւն չառնէ,

բան մը չկորսնցներ, վասն զի, ըստ իւր վարդապետութեան՝ ճշմարիտ երջանկութիւնը մահէն վերջ կը սկսի, յաւիտենական կեանքով: Եւ այս բոլորը կատարեալ համոզումով կը քարոզէ: Ըստ իրեն, իւր թագաւորութիւնը այս աշխարհէս դուրս կը գտնուի, որուն արեւն աւելի զօրաւոր է և բոլոր տիեզերքը կը լուսաւորէ. և մարդ մը որչափ աւելի կրէ հո՛ս, այնչափ ալ պիտի վայելէ իւր թագաւորութեան մէջ: Եւ այս բարւոյն հասնելու համար՝ միակ պարտականութիւն մ'ունի երկրիս վրայ, որ է սիրել, ու միշտ սիրել:

— Հրաշալի՛ վարդապետութիւն — ըսաւ Անթէա, ձեռքը ճակտին տանելով:

— Եւ սակայն ամէն մարդ իւր մահը կ'ուզէ — ըսաւ Կիննա:

— Զարմանալի չէ՛ — պատասխանեց Պիղատոս. — ոմիկը ատելութեամբ կը սնանի, և ատելութիւնը միայն խաչ կըրնայ տալ անոր որ սէր կը նուիրէ:

— Բայց վստա՞հ է — աւելցուց Անթէա — թէ մահէն վերջ հանգիստ կրնայ ապրուիլ:

— Անշուշտ: Եւ ասոր համար է որ մահը զինք չսարսափեցներ:

— Ի՛նչ լաւ պիտի ըլլար, կայիո՛ս:

Եւ վայրկեան մը վերջ հարցուց.

— Եւ ինչպէս գիտէ այս բաները։

Պիղատոս ձեռքով տարտամ շարժուձեւ մ՚ըրաւ։

— Կ՚ըսէ թէ մարդիկներու Հօրմէն գիտէ այդ բաները, որ Հրէից համար նոյն է, ինչ որ մեզի համար Աբրամազդը, միայն թէ նա մէկ է և ողորմած։

— Ինչ լաւ պիտի ըլլար, կայիա՛ս — կրկնեց հիւանդը։

Յետոյ ամէնը լռեցին։ Պոնտոս քիչ մը մտածութեանց մէջ ընկղմեցաւ, գլո՛ւխը շարժելով և ուսերուն մէջ կծկելով, գուցէ դարձեալ Նազովրեցւոյն վաղապետութեան վրայ կը մտածէր։

— Վերջապէս ոտքի ելաւ և խնդրեց մեկնիլ։

Յանկարծ, ըսաւ Անթէա.

— Կայիա՛ս, երթա՛նք այդ Նազովրեցին տեսնելու։

— Մի դանդաղիք — ըսաւ Պիղատոս հեռանալով. — Թափօրն ի մօտոյ կը սկսի։

Է

Առտու, երկինքը հրաշալի էր, կէս օրուան մօտ սկսաւ ամպոտիլ և արեւելեան կողմէն վեր կը բարձրանային մութ ու կարմրորակ ամպեր, փոթորկի աւետաբեր։ Վարը՝ արեւմտեան հորիզոնին վրայ դեռ կապոյտ երկնքի շերտ մը կը փայլէր արեգական ոսկեշող լոյսէն, բայց ամպերը միշտ բարձրանալով շուտով պիտի մթագնէին բոլոր հորիզոնը։ Իսկ քաղաքին վրայ դեռ կը շողար արեգակը և մեզմ քամի մ՚անգամ չէր շնչեր։

Դէպ ի Գողգոթա տանող ճամբայն կը փութար բազմութիւնը խմբովին՝ ուսկից ախուր թափօրը պիտի անցնէր։ Արևը կը լուսաւորէր անապատ, անմշակ և մելամաղձոտ վայրը, և այն լոյսն աւելի դուրս կը ցայտեցնէր մերկ ժայռերու մթութիւնը։ Հեռուն, հորիզոնին վրայ, կը տարածուէր բլուրներու անորոշ շղթայ մը։ Վարը, ընդ մէջ Գողգոթայի և քաղաքապարսպին անմշակ ու քարոտ հովիտ մը կար, որուն մէջ ցիրուցան կային քանի մը տկար սաղարթներով վայրի թզենիներ։ Ամէն ինչ ցած, հարթ, տուներու տանիքները տա-

փարակ և միակերպ, որ ծիծռանց բոյնե-
րուն կը նմանէին, բաց ի պարիսպներէն.
և քիչ մը խորը, Պանկրոպոլիսը, հոյակապ
և նշանաւոր իւր սպիտակ դամբաններով։

Ընդարձակ բանակեցի մը պէս, հա-
ւաքուած կը տեսնուէր բազմութիւն մը
մարդկանց և ուղտերու, տաղաւարներով
ու վրաններով, որոնք Ջատկի տօնին առ-
թիւ շրջակայ տեղերէն հոն եկած էին։
Բոլոր այն անկանոն կերպով իջևանած
խուժանը, կը ջանար ցրուիլ ու ապաւէն
գտնել քաղաքին զովագոյն կողմերը, որով-
հետև հետզհետէ կը մօտենար ամէնէն սաս-
տիկ տաքութեան ժամը, զոր գուշակել
կու տար արդէն կիզիչ արևը. սա չարա-
չար կ'անդրադառնար գետնէն դուրս ցը-
ցուած մոխրագոյն ժայռերէն, այնպէս որ
տեսարանը, ինչպէս նաև այն անսովոր
շարժուձևերը՝ մելամաղձոտ էին և տխուր։

Խուլ և խոր դղրդիւն մը կ'ելնէր քա-
ղաքէն, նման այն ալիքներուն որ կը խոր-
տակուին ու կը մեռնին մերկ ծովափին
վրայ։

Բազմութիւնը, որ կանուխ Գողգոթա
ելած էր սպասելու, վար՝ դէպ ի քաղաք
կը նայէր, ուսկից պիտի յառաջանար եզա-
կան թափօրը։ Նախ կը հասնէր Պիղատոսի
գահաւորակը՝ դատաւորին զինուորներէն

շրջապատուած, որոնց պաշտօնն էր անցք
բանալ ժողովրդեան մէջ, և ի հարկին, օտա-
րականները պաշտպանել մոլեռանդ ամբո-
խին լուտանքներէն։ Պատգարակին քով էին
նաև Կիննա և Հռուբիղաս հռովմայեցի
հարիւրապետը։

Պիղատոս, սովորականէն նուազ անհան-
գիստ կը տեսնուէր, թէև կէս օր կը մօտե-
նար, յորում չար տեսիլներն իւր կեանքը
կը մաշէին. Նազովրեցւոյն նկատմամբ դա-
տաւորին ըսած խօսքերն ա՛յնչափ իւր միտ-
քը կը զբաղեցնէին որ հիւանդութեան մտա-
ծումներէն կը սթափեցնէին զինք. կը
զգար թէ խորհրդաւոր բան մը կը կատա-
րուէր իւր մէջ, զոր չէր կրնար մեկնել։

Այն ժամանակի աշխարհը՝ շատերուն
հանդարտութեամբ մեռնիլը տեսած էր, նը-
ման խարոյկի մը որ կը մարի փայտի պակ-
սելէն։ Բայց շատ անգամ այն հանդարտու-
թիւնը յառաջ կու գար զիւցազնին մէջ ճա-
կատագրի ընդհամարհելէն, կամ փիլիսո-
փայական համակամութենէ մը, որ անհը-
բաժեշտ կը նկատէր ներգործական կեան-
քէն՝ դէպ ի տարտամ, միգապատ, անորոշ,
կէս գոյութեան մ'անցնելը՝ որուն կը հաւա-
տային։ Բայց մինչև այն ատեն, ոչ ոք օրհ-
ներ էր մահը, ոչ ոք կը մեռնէր՝ հաւատա-
լով թէ միայն անդրգերեզմանական կեանքի

մէջ կը սկսէր ճշմարիտ գոյութիւն մը, մըշտընջենաւոր գոյութիւն մը, զոր միայն կըրնար տալ ամենակարող և անհուն Լոկ մը։

Եւ այն զոր պիտի խաչէին, բացարձակ վստահութեամբ կը քարոզէր զայս։ Այս տեսակ վարդապետութիւն մը Աննթէայի սիրտը շարժած էր, իբրև միակ աղբիւրը յոյսի և մխիթարութեան։ Գիտէր, թէ պիտի մեռնէր, և այս մտածումին համար՝ անհուն տըխրութեան մատնուած էր։ Ի՞նչ բան էր իրեն համար մահը։ Բաժանումն՝ կիննայէն, հօրմէն. զրկումն՝ լոյսէ, սէրէ, ցուրտ անապատ մը, գրեթէ խաւարային կեանք մը։ Եթէ մահն իրեն ո՛և է օգուտ մ՛ունենար, եթէ Աննթէա կարենար գոնէ միասին տանիլ սիրոյ պզտիկ յիշատակ մը, կամ երջանկութեան ժժգոյն պատկեր մը, այն ժամանակ համակամութեան ոյժը գտած պիտի ըլլար իր մէջ։

Եւ այսպէս, մահէն ոչինչ սպասած ժամանակ, կը լսէ, թէ մահն ամէն բան կըրնայ տալ իրեն։ Եւ ո՞վ, ո՛վ զինք կ՛ապահովցնէ։ Մարդ մը, անծանօթ մը, ուսուցիչ մը, մարգարէ մը, փիլիսոփայ մը, որ կ՛ուսուցանէ մարդկանց՝ թէ սէրը առաքինութեանց մէջ մեծագոյնն է, որ կ՛օրհնէ զինք ձագկողները, երբ խաչի վրայ իսկ մեռնելու մօտ է։ Եւ Աննթէա

կը մտածէր. — Ինչո՞ւ նա այդպէս կը քարոզէր, երբ իւր միակ վարձատրութիւնը խաչը պիտի ըլլար։ Շատերը իշխանութեան կը ցանկան, և նա չուզեց ու աղքատ մնաց. ուրիշներ պալատներու մէջ, շռայլութեանց մէջ, ծիրանազգեաց, փղոսկրէ և սատափազարդ կառքերու մէջ կ՛ապրին, և նա իբրև հովիւ մը կ՛ապրէր իւր հօտին մէջ։ Անիկայ սէր, գթութիւն և աղքատութիւն կը քարոզէր, ուստի չէր կրնար անգութ ըլլալ և մարդիկը խաբել։ Եւ եթէ ճշմարտութիւնն էր բանը, օրհնեալ ըլլան վիշտն ու մահը, որ իրեւ թեւեր դէպ ի լոյս կը տանին։

Հիւանդին սիրտն ու միտքը կառչեցան այս անդրադարձութեան վրայ՝ իբրև ապաստութեան խարսխի մը։ Եւ յիշեց իր հօր խօսքերն, որ մէկէ աւելի անգամներ կրկնած էր իրեն, թէ նոր ճշմարտութիւն մը միայն մարդկային թշուառ ու յոգնած հոգին պիտի կարենար դուրս քաշել խաւարէն՝ որուն մէջ կաշկանդուած էր։ Ուրեմն ասիկայ նոր ճշմարտութիւն մ՛էր, որ մահուան կը յաղթէր և իրեն հետ ուներ ազատութիւնը։

Աննթէա բոլորովին այսպիսի մտածութիւններու մէջ սուզուած էր. կէս օ՛ր եղաւ, և կիննա այն օրը չտեսաւ բնաւ հի-

ւանդին դէմքին ամպոտելն ու գունատիլը։

Թափօրը քաղաքէն մեկնեցաւ դէպ ի Գողգոթա, և Անթէայի գահաւորակին բարձունքն ամէն կողմ կ'իշխէր։ Անթիւ էր բազմութիւնը. քաղքին բաց դռնէն միշտ նորանոր խումբեր կ'ելնէին և ուրիշ ճամբայներով անոնց կը միանային. թափօրի երկու կողմէն ալ տղոց բազմութիւն մը կ'երթար։

Ամբոխը գոյնը կը փոխէր. մարգոց ճերմակ պարեգօտներն ու կապոյտ թաշկինակները, և կանանց կարմիրները կը տեսնուէին. իսկ մէջ տեղ հռովմայեցի զինուորաց նիզակները կը շողային։

Խուժանին դղրդիւնը հեռուէն կը լսուէր և հետզհետէ աւելի որոշ և պայծառ կ'ըլլար։

Վերջապէս թափօրն Անթէայի մօտեցաւ։ Առջևէն տղոց բազմութիւն մը կուգար, կիսամերկ, քուրջի կտոր մը մէջքերնին կապած և գլուխնին ածելուած, միայն երկու խոպոպներ անոնց սև այտերէն վար կախուած էին։ Ձեռքերնին կուգար խառն խումբ մը, այրած դէմքերով, և վայրենի տեսարանին ներկայ գտնուելու խելացնոր խնդութեամբ։

Մարդասիրութեան, գթութեան ոչ մէկ նշոյլ չկար վրանին, և սուր աղմկաւոր

ձայներէ, սուլոցէ, ոռնոցէ ու խառն աղաղակներէ վեր կը բարձրանային այն յիմար խուժանէն։ Անթէա կը դիտէր և զմայլած մտիկ կ'ընէր, թէև ոչ նոր իրեն համար՝ ժողովրդեան այն խանդավառութիւնը. իսկ Հռուբիղաս հարիւրապետն, որ քոջն էր, ամէն մանրամասնութիւն կը հաղորդէր իրեն։

Միշտ նոր ու անթիւ բազմութիւն մը դուրս կը յորդէր Երուսաղեմէն. աւելի նուազ թուով քաղաքացի հարուստներ՝ գեղեցիկ վերարկուներու մէջ փաթթուած և միշտ ամկէն հեռու, բայց բազմաթիւ գիւղացիներ՝ դէպ ի սուրբ քաղաքը կը խուժէին Զատկի տօնախմբութեանց համար. նոյնպէս մշակներ՝ անպաճոյճ զգեստներով և հովիւներ՝ այծու մորթով ծածկուած։

Հոն կային նաև կանայք, բայց գիւղացի կանայք, գռեհիկ և աշխարհի կիներ՝ գոյնզգոյն զգեստներով, ներկուած մազերով ու յօնքերով, նարդոսաբոյր հոտերով և նկարչեղունգներով, զարդարուն ականջներով և մանեակաւոր ու գոհարակուռ պարանոցներով։ Նման ընկերութենէ մը՝ հարուստ և ազնուական տիկնայք ևս կը խորշէին։

Ձեռքերնին Սինեարիոնը. մէջ տեղն Աննա քահանայապետը, խորամանկ դէմ-

քով ու բժոտ աչքերով ծերունի մը, և Կայիափա՝ երկճիւղ սաղաւարտով և զարդարուն եփուտը կուրծքին վրայ։

Եանէն կու գային փարիսեցիք. կրկրաքարշներն՝ դանդաղութիւն և յոգնութիւն կեղծելով և կամաւոր քարուտ շաւիղներէ քալելով. արիւնահոսներն՝ քարերով իրենց ճակատն ու կուրծքը բաղխելով. կորաքամակներն՝ մէջքերնին ծռած, իբրև նշան բոլոր ժողովրդեան մեղքերն իրենց ուսին վրայ բառնալու։ Իրենց տխուր ու անժպիտ կերպարանքը, դէմքերուն դաժան ցրտութեան արտայայտութիւնը, հակապատկերը կը կազմէին գիրենք շրջապատող աղմկարար ամբոխին։

Կիննա, իբրև ազնուական դասակարգի պատկանող մարդ՝ արհամարհութեամբ կը նայէր ամենուն. Անթէա զարմանքով և երկիւղով, և իր պատգարակին առջևէն անցնելէն բազմաթիւ հրեաներ կ'անցնէին, յունական տիպարներով, ինչպէս նկարագրած էր իրեն փոխհիւպատոսը։ Հիւանդին մատաղ դէմքը՝ որուն վրայ մահն արդէն կնիքը դրոշմած էր, անոր կազմուածքը՝ որ աւելի սուտերի՝ քան կենդանի էակի կը նմանէր, ամենուն ուշադրութիւնը կը գրաւէին. և խուժանը գինք կը դիտէր անպատկառ ընտանութեամբ մը.

ան ամբոխէն կը պաշտպանուէր միայն իր գահաւորակը շրջապատող գինուորներէն։ Հանդէպ օտարականին ցոյց տրուած ատելութիւնն ու արհամարհանքը՝ կ'ըմբռնէր նաև խեղճ հիւանդը։ Կը տեսնէր որ անոնց աչքերէն ուրախութիւն կը փայլատակէր, գիտնալով որ մահն իրեն պիտի խլէ անոր հոգին։

Այն ժամանակ միայն հասկցաւ Անթէա, թէ ինչո՞ւ այդ ժողովուրդը մարգարէին մահը կ'ուզէր, որ սէր կը քարոզէր, և նազովրեցւոյն կերպարանքն աւելի անուշ և գեղեցիկ երևցաւ։ Նա կը մեռնէր, բայց ինքն ալ պիտի ուզէր մեռնիլ յօժարակամ. նա մարդուն անդառնալի վճռով, ինք բնութեան ճակատագրական օրէնքով. ո՜հ, ո՛րչափ սերտ և քաղցր կապեր իրարու կը միացնեն՝ կրողներն ու մեռնողները։ Եւ եթէ հանդերձեալ կեանց գոյութիւնը զնազովրեցին անվրդով խաչի մահուան կը մղէր, իրեն այս հաւատքը կը պակսէր. ո՜հ, այո՛ և անոր մահուան տեսարանն այս մտածութիւնը ներշնչած էր իրեն։

Ամբոխին դղրդիւնը էջթալով կը զօրանար. գոչիւն և սուլելու ձայներ կը լսուէին. ապա յանկարծ խոր լռութիւն տիրեց, և հետզհետէ սկսաւ զինքերու շաչիւնն և լեգէոններու ծանր ոտնաձայները լսուիլ։

Բազմութիւնը դողաց, ճեղքուեցաւ և դա-
տապարտեալներուն ուղեկից զօրաց վաշ-
տը գահաւորակին մօտ հասաւ։ Առջևէն
և քովէն դանդաղաքայլ կը յառաջէին
զինուորները. մէջ տեղը կը տեսնուէին
երեք խաչեր, որ կարծես օդոյ մէջ կը
լողային, որովհետեւ խաչաբարձներն ա-
նոնց բեռին տակ կքած էին։ Դիւրին էր
հասկնալ թէ այդ երեքին մէջ Նազովրե-
ցին չկար, վասն զի անոնցմէ երկուքին
դէմքը անառակի և ոճրագործի կնիքն ու-
նէին, իսկ երրորդը գիւղացի մ'էր որ ու-
րիշի մը տեղ խաչը կը տանէր։

Նազովրեցին եռևէն կ'երթար երկու
զինուորներով։ Սպիտակ պատմուճանին
վրայ կարմիր քղամիտ հագուած, գլուխը
փուշպսակ, որուն տակէն արիւնը կայլա-
կանման ոլոռն ոլոռն գեհին կը թափէր։
Գունատ ու նուաղկոտ, յոգնած քայլերով
վեր կը բարձրանար՝ ժողովրդեան նախա-
տինքներով և ընկղմած իւր մտածութիւն-
ներուն մէջ, որ տեսանելի աշխարհէն ան-
դին կ'անցնէին. ընդհանուր ներողամիտ
հոգւով՝ որ մարդկային ներողամտութեան
սահմանէն վեր էր. յաւիտենականութեան
գաղափարին մէջ ընկղմած՝ ազատ երկ-
րաւոր թշուառութիւններէ, սակայն տիե-
զերքի անհուն վշտով համակուած։

— Դու ես ճշմարտութիւնը — փսփսա-
ցին Անթէայի դողդոջուն շրթները։

Թափօրը վայրկեան մը կանգ առած էր,
որովհետեւ զինուորները դժուարաւ անցք
կը բանային ամբոխին մէջ, և Անթէա մօ-
տէն կը տեսնէր Նազովրեցին, կը տեսնէր՝
որ քամին անոր մազերը կը տարուբերէր,
կը տեսնէր՝ անոր գունատ ու թափանցիկ
դէմքին վրայ կարմիր քղամիտին ցոլա-
ցումը։ Դէպ ի նա խուժեց ամբոխն որ
արդէն դժուարաւ զինուորներէն կը պաշա-
պանուէր։

Ամէնուրեք կը տեսնուէին տարածուած
բազուկներ ու բռունցքներ, ակնակապճէն
դուրս ինկած աչքեր, սպիտակափայլ ակ-
ռաներ, և բերաններ որ շարունակ անէծք
կը տեղային։

Եւ նա, շուրջը նայելով կարծես կ'ըսէր.
«Ի՞նչ ըրած եմ ձեզի», և աչքերը երկինք
վերցուցած կ'աղօթէր։

— Անթէ՛, Անթէա՛ — կանչեց կիննա։

Բայց Անթէա կարծես չէր լսեր անոր
ձայնը. աչքերը Նազովրեցւոյն վրայ յա-
ռած էր և այտերէն յորդ արցունքներ կը
թափէին։ Մոռցած էր իւր տկարութիւնը,
մոռցած էր թէ քանի մ'օրէ ի վեր այլ ևս
չէր շարժեր։ Հիմա, ոտքի ելած բարկա-
ցայտ ոստումով, և դողդոջուն ու արտա-

սուաթոր աչքերով՝ իւր պատգարակը ծածկող ծաղիկները կը քաղէր և Նազովրեցւոյն ոտքերուն տակ կը սփռէր։

Վայրկեան մը խոր լռութիւն տիրեց։ Ժողովուրդն ապշահար եղած էր՝ տեսնելով որ ազնուական հռովմայեցի տիկին մը՝ պատիւ և յարգանք կը մատուցանէր դատապարտեալի մը։

Եւ Նա ակնարկ մը դարձուց Անթէայի նիհար դէմքին, և շրթունքները շարժեցան՝ կարծես զայն օրհնելու համար։ Կրկին գահաւորակի բարձերուն վրայ ինկաւ Անթէա, և կը զգար որ բարութեան, ողորմածութեան, յոյսի և լուսոյ հեղեղ մը զինք կ՚ողողէր. ու զարձեալ մրմնջեց.

— Ա՜յո՛, դո՛ւ ես ճշմարտութիւնը։

Եւ սիրոյ արցունքներ սկսան թափիլ այտերէն վար։ Ա՜յս պահուս, դատապարտեալն ընդքարշ տարուած էր մինչև հո՛ն, ուր ժայռի մը ճեղքին մէջ երեք ցիցեր մխուած էին, որոնք խաչերուն հիմն պիտի ըլլային։ Ամբոխը վայրկեան մը ծածկեց զայն Անթէայի աչքերէն. բայց տանջանաց վայրը բարձրադիր էր, և հիւանդն իսկոյն տեսաւ նորէն անոր գունատ դէմքը, փուշէ պսակը, երբ սկսած էին արդէն խաչելութեան պատրաստութիւնները։

Առաջին անգամ երկու աւազակներու

խաչերը կանգնուեցան, յետոյ երրորդը, որուն գագաթը կը ծածանէր մագաղաթէ երիզ մը՝ անընթեռնելի արձանագրութեամբ։

Զինուորները բիրտ կերպով մերկացուցին Նազովրեցին և զայն խաչին վրայ կը տարածէին, իսկ ամբոխը կ՚աղաղակէր. «Ապրեցո՛ զքեզ, թէ Որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ . . . եթէ թագաւոր է Իսրայելի՝ իջցէ այժմ ի խաչէդ և հաւատասցուք դմա»։

Բայց մարդ մը որ Անթէայի մօտ կը գտնուէր, և սպիտակ պատմուճան հագուած էր, գլուխը փոշիով ծածկեց՝ սրբոտուր ու բարձրաձայն գոչելով.

— Ես բորոտ էի, Նա զիս սրբեց և զայն կը խաչեն։

Անթէայի դէմքն աւելի գունատեցաւ։

— Նա զինք բժշկած էր... լսեցի՞ր, Կայիո՛ս։

— Տուն վերադառնա՞նք — հարցուց կիննա։

— Ո՛չ, ես կը մնամ։

Ցուսահատ զգացումով մը համակեցաւ կիննա, թէ ինչո՞ւ Նազովրեցին իւր տունը կանչած չէր։

Նոյն պահուն արդէն անոր մարմինը վեր բարձրացած էր խաչին վրայ, և զինուոր մը կը մօտենար ոտները գամելու։

Ամպերն, որ առաւօտէն ի վեր հորի-

զոնին վրայ կուտակուած էին, այժմ ա-
րեգակը կը ծածկէին. հեռուոր բլուրներն
ու ժայռերն որ մինչև այն ժամանակ ակ-
նախիտ ցոլքով կը փայլէին, հետզհետէ
կը մթագնէին և լոյսը տեղի կու տար
խաւարին:

Մութ կարմիր վերջալոյս մը կը տա-
րածուէր չորս դին, և աւելի սպառնալից
երևոյթ մը կ'առնուր՝ ծրչափ արեգակին
ամպերուն տակ կը ծածկուէր: Նախ տաք
հով մը կը փչէր, յետոյ դադրեցաւ, և
օդը դէռ ծանրացաւ: Սև սև ամպեր յան-
կարծ գիշերուան պէս մարեցին նաև կա-
մըրջակ շողերն ու խաւարով պատեցին
դաշտ ու ժոզովուրդ. կարծես թէ վիշտ ու
դառնութիւն կը շնչուէր:

— Տուն վերադառնանք — կրկնեց Կիննա:

— Կ'ուզեմ անգամ մ'ալ տեսնել զայն
— ըսաւ Անթէա:

Խաւարը պատեր էր խաչուածներու
մարմիններն, և Կիննա հրամայեց գահա-
ւորակն աւելի մօտեցնել չարչարանաց
տեղը: Անթէա աչքերը վեր առաւ. խա-
ւարին մէջ ժժգոյն լոյսի մը պէս կը տես-
նուէր Նազովրեցւոյն մարմինը, որուն
կուրծքը կը հեւար, բայց գլուխն ու աչ-
քերը դէպ ի երկինք դարձած էին: Խուլ
ու խոր դղրդիւն մը լսուեցաւ, և ապա

խլացուցիչ շաչիւնով ահաւոր որոտում մը,
փայլատակ մ'արևելքէն արևմուտք ար-
շաւեց և այնպէս սաստիկ պայթեցաւ որ
երկիրը դողաց: Երկրորդ լուսաշող փայ-
լատակ մ'ալ լուսաւորեց երկինքը, եր-
կիրը, խաչերը, զինուորաց զէնքերն ու
խռովեալ ամբոխը: Խաւարն աւելի խը-
տացաւ և լռութեան մէջ խաչին տակ
կը լսուէին կանանց լացը:

Հո՛ս ու հո՛ն կ'լսէին բարձրաձայն —
Աղաչեր մը խաչեցին: — Նա ճշմարտու-
թիւնը կը քարոզէր: — Մեռելները կը
յարուցանէր:

Եւ ձայն մ'ալ բացագանչեց. — Վա՛յ
քեզ, Երուսաղէմ. — և ուրիշ մը՝ — Եր-
կիրը կը դողայ:

Երրորդ փայլակ մ'ևս ամպերը պատ-
ռեց: Ձայները լռեցին կամ կորսուեցան
մրրկի սուլոցին մէջ, որ ծառերն ու ժո-
ղովրդեան զգեստները տակնուվրայ կ'ընէր:

— Երկիրը կը դողայ — լսուեցաւ դար-
ձեալ բազմութեան մէջ: Շատեր խեղթի
պէս սկսան վազվզել. ոմանք երկիւղէն
տեղերնին գամուած մնացին:

Այս պահուս, մրրիկն ամպերը ցրուե-
լով, խիտ խաւարն սկսաւ պարզուիլ,
լոյսն հետզհետէ կը բացուէր, և ամպերու
պատռուածքէն արեգական հեղեղ մը դուրս

յորդեց ու ամէն բան լուսաւորեց, բլուրները, խաչերն և ամբոխին սարսափահար դէմքերը։

Նազովբեցւոյն գլուխը ծռած էր կուրծքին վրայ, մոմի պէս ժժգոյն, աչքերը բաց և շրթունքները սևցած էին։

— Մեռա՛ծ է — շշնջեց Անթէա։

— Մեռա՛ծ է — կրկնեց Կիննա։

Ան բոպէին, հարիւրապետը մօտենալով, նիզակով խոցեց անոր կողը։

Զարմանալի բան, մեռեալի տեսքն ու արեգակը՝ կարծես հանգստացուցած էին ամբոխը, որ խաչին մօտեցաւ ու սկսաւ դարձեալ նախատել զայն, ըսելով.

— «Ապրեցո՛ զքեզ, եթէ որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ»։

Անթէա անգամ մ՚ալ անոր ժժգոյն ու խոնարհած երեսը դիտեց և ըսաւ ինքն իրեն. — Միթէ կարելի՞ է որ յարութիւն առնէ։ Կը նշմարէր անոր դէմքին վրայ մահուան բոլոր նշանները, բիբերը մարած, շրթունքը կապոյտ ու մարմինը կախուած։ ԵՒ յուսահատութիւնն ու ճնշող տարակոյսը կը կրծեր իւր հոգին։

Կիննա ևս աւար եղած էր մաշող վըշտի մը։ Թէպէտ չէր հաւատար, թէ Նազովբեցին յարութիւն առնէ, սակայն համոզուած էր, որ եթէ ողջ ըլլար, անտարակոյս իւր Անթէան կը բժշկէր։

Եւ ամբոխն անգութ մոլեգնութեամբ կը շարունակէր գոչել. — «Էջ ի խաչէդ»։

— Էջ – կ՚ըսէր Կիննա, աղերսագին շեշտով մը, — էջ բժշկէ զինք և իմ հոգիս ալ քեզ թող ըլլայ։

Լեռները դեռ ստուերի մէջ պարուրուած էին, բայց Golgotha և քաղաքին վրայ ամպի նշան չկար։ Անտոնիոսի աշտարակը մաքուր և լուսաւոր կը փայլէր երկընքի կապոյտին վրայ, և զովացած օդին մէջ ծիծառները ճախրելով զուարթ կը գեղգեղէին։

Նշան ըրաւ Կիննա զինուորաց՝ տուն վերադառնալ, որովհետև կէս օրն արդէն երեք ժամ անցեր էր։

Ա՛նապարհի մէջ, ըսաւ Անթէա.

— Այսօր ուրուականները չերեւցան։

Ան վայրկենին, Կիննա ալ նոյնը կը մտածէր։

Ը

Յաջորդ օրն ալ ուրուականները չերևցան։ Մանաւանդ թէ հիւանդը բաւական ինքզինք գտած կը տեսնուէր, նաև որովհետև Աղեքսանդրիայէն եկած էր Տիմոն ալ, որ կիննայի նամակներէն վախցած, շտապած էր՝ իր աղջիկը գոնէ անգամ մ'ևս տեսնելու։

Կիննայի սիրտը, թէպէտ չէր համարձակեր բնաւ յուսալ թէ կը դադրէին չար տեսիլներն, բայց դարձեալ յուսով կ'արծարծէր, որովհետև ուրիշ ժամանակ շատ դադարներ եղած էին, սակայն ոչ երկու օր շարունակ։ Այսուհանդերձ նա իր հիւանդին բարւոքումը Տիմոնի գալստեան և այն տպաւորութեան կը վերագրէր զոր Անթէա նախորդ օրը չարչարանաց վայրն ունեցած էր։ Այս տպաւորութիւնն այնչափ տիրապետած էր հիւանդին հոգւոյն որ հօր հետ ուրիշ բանի վրայ չէր կրնար խօսիլ։ Եւ Տիմոն, առանց վհատանելու, ուշադրութեամբ կը լսէր, և բացատրութիւններ կ'ուզէր Նազովրեցւոյն վարդապետութեան վրայ, որոյ նկատմամբ, Անթէա, Պիղատոսի ըսածէն աւելի նոր տեղեկութիւն մը չունէր։

Զգալի կերպով հիւանդին առողջութիւնն և ոյժը կը կազդուրուէր։ Այն կէս օրն ալ անցաւ, առանց հանգիստը խռովելու։ Յետ, այնչափ վշտակցութեանց, այս առաջին երջանիկ օրն էր զոր ունեցաւ Անթէա, և ուզեց որ կիննա այդ թուականն արձանագրէ, իբրև իրենց սիրոյ օրերուն ամենագեղեցիկներէն մին։

Երկինքը մութ էր և տըխուր, օրն անձրեւոտ, և խիտ ու ցուրտ անձրև մը բոլոր օրը տեղաց։ Միայն երեկոյեան դէմ հորիզոնը բացուեցաւ և մայրամուտի աղեգակը ծիրանեգոյն շող մը սփռեց անապատի գորշ քարերուն, քաղաքին և մերձաւոր արուարձաններուն վրայ, և Միջերկրականի հեռաւոր անդունդի մը մէջ սուզուեցաւ։

Երկրորդ առաւօղը գեղեցիկ, զով և բուրումնաւէտ էր, երկինքն առանց ամպի, և կենսատու արեգակն իր ոսկեշող լոյսով կ'ողողէր երկիրը։ Անթէա հրամայեց զինք սովորական արմաւենւոյ աւուերին տակ տանիլ, որպէս զի այն բերկրութենէն զով օդն ու հեռաւոր կապոյտը վայելէ։ Կիննա և Տիմոն քայլ մը չէին հեռանար անոր քովէն, հետևելով դէմքի ամենաւիրքը փոփոխումին, որուն մէջ կը կարդացուէր անհանգիստ սպասողութիւն մը, բայց

մահուան երկիւղի հետք մ՚անգամ չէր տեսնուեր որ ընդհանրապէս կէս օրուան մօտերը կու գար վրան։ Աչքերը կը վառ֊ վըռէին և թեթև կարմրութիւն մ՚անոր այտերը կը գունաւորէր։

Կիննայի սրտին մէջ կը վերանորոգուէր իւր սիրուհւոյն առողջութեան յոյսը, և այս մտածած ժամանակ կ՚ուզէր գետին փռուիլ, հեծել և աստուածներն օրհնել. սակայն իսկոյն սիրտը տարակոյսով կը ճնշուէր որ թերևս այդ ապաքինումը՝ մարող բոցի մը վերջին առկայծն ըլլայ. և իւր յոյսն ամրապնդելու համար Տիմոնի կը նայէր, զոր գուցէ միևնոյն մը֊ տածութիւնները կը խռովէին և դիտմամբ իւր փեսին նայուածքին հանդիպելու կը զգուշանար։

Երեքէն ոչ մէկը չըսաւ թէ կէս օրը մօտ էր, բայց Կիննա, որուն սիրտը սաստիկ կը տրոփէր, կը դիտէր թէ ստուերներն ա֊ րագաբար կը կարճնային. խոր լռութիւն մը կը տիրէր։

Գուցէ ամենահանգիստն Անթէա էր, որ իւր գահաւորակին վրայ տարածուած, զը֊ լուխը ծիրանի բարձին տուած՝ ծովէն ե֊ կած զով օդը կը շնչէր։

Բայց, կէս օրուան մօտ, այդ զովա֊ շունչ քամին ալ դադրեցաւ. շոգը ծանր

էր և հեղձուցիչ։ Նարդոսն ու քրքումը կծու բոյր մը կը տարածէին, ծաղկանց վրայ թիթեռնիկները կը թռչտէին, մողէզները ժայռերու ճեղքերուն մէջ արեւուն կ՚ել֊ նէին. ամբողջ բնութիւնը կարծես թմրած էր այն անդորրը լռութեան մէջ, այն ջեր֊ մութեան և լուսոյ հանդիսին մէջ, այն կա֊ պոյտ երկնքին տակ։

Կիննա և Տիմոն ևս տաքէն ընկճուած գետին փռուած էին, և հիւանդն աչքերը փակեր էր, կարծես թեթև քունով մը կը նիրհէր. և ո՛չ լինչ էր խանգարեր լռու֊ թիւնը բաց ի խոր հառաչանքէն, որ մերթ ընդ մերթ դուրս կը թռչէր հիւանդին կուրծ֊ քէն։ Այս ժամանակ նկատեց Կիննա, որ իւր ստուերն աստիճանաբար կ՚երկարէր դարնեվարդերու ծառուղւոյն մէջ։ Կէս օր էր։

Յանկարծ, Անթէա աչքերը բացաւ և օտարոտի ձայնով մ՚ըսաւ.

— Կայիո՛ս, ձեռդ լինձի տո՛ւր։

Նա վեր ցատկեց և արիւնը երակնե֊ րուն մէջ սառեցաւ. ուրուականներու ժամն էր։

— Կը տեսնե՞ս, կ՚ըսէր Անթէա, այն լոյսն որ վեր կը բարձրանայ, օդոյ մէջ կը փայլի և դէպ ի լինճ կու գայ։

— Անթէա՛, կ՚աղաչեմ մի՛ նայիր այն կողմը։

Բայց հիւանդին դէմքին վրայ սովորական երկիւղի արտայայտութիւնը չկար։ Շրթունքները բացուեցան, աչքերն աւելի փայլեցան և անպատմելի ուրախութիւն մը պատեց դէմքը։

— Լ՛ոյսը կը մօտենայ – կ՛ըսէր։ Ես կը տեսնեմ։ Նա ինքն է. Նազովրեցին է։ Կը ժպտի... Ո՜հ, ինչ բարի, ինչ ողորմած... իւր բեւեռեալ ձեռներն ինծի կարկառած է... կայիո՛ս, ան ինծի առողջութիւն, փրկութիւն կը բերէ, զիս իրեն կը կանչէ։

Եւ կիննա, գունաթափ, կը պատասխանէր.

— «Երթանք, անոր երթանք» եթէ կը կանչէ։

Քիչ վերջ, այն քարոզ կածանէն որ դէպ ի քաղաք կը տանէր, երևցաւ Պոնտոս Պիղատոս։ Կը տեսնուէր թէ նա մեծ նորալուր մ՛ունէր, զոր՝ իբրև իմաստուն մարդ, հասարակ ու ոգէտ ամկին առաջեպէլ մը կը նկատէր։ Եւ ճակատը սրբելով, գոչեց.

— Գիտէ՞ք ինչ կը խօսի ժողովուրդը քաղքին մէջ...

Թէ Նազովրեցին ցարեաւ։

891.85
U-40

4848

ՀՀ Ազգային գրադարան
NL1712040